



891.99

U7-44



ՉՄԵՐԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

Գրք
2/115
904



4/220

H A P M.
3-832a

19 NOV 2010

ՀԲԱՏ. Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Ա. Պողոսեանի գրակ. ֆոնդի արդիւնքով

891.99
4-44

23 JUN 2005

ՉՄԵՐԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

ԸՍՏ ՇԵԲՍԴԻՐԻ

3342

Պ. Երակազմեց

Ղ. Ա. Ղ. Ա. Յ. Ե. Ա. Ն.



Թ Ի Փ Լ Ի Ս

Պպ. Ի. Ա. Շապուճի, Դվուրց. փողոց, ա. վր. ագն.

1910

06.02.2013

18708

2008 JUL 25

Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս հեքիաթը վերակազմելիս հետևել եմ Շէքսպիրի «Չմերային հեքիաթին» Ա. Ա. Սոկոլովսկու թարգմանութեամբ և Վիկտոր Օստրազորսկու վերակազմածին նոյն թարգմանութիւնից:

Դ. Ա.

1 նոյեմբերի 1910 թ.
Թիֆլիս



39819-63

ՉՄԵՐԱՅԻՆ ՀԷՔԻԱԹ

1

Մեզանից շատ-վաղ, հին ժամանակներում երկու թագաւոր են լինում, մէկի անունը Լէօնտ, իսկ միւսինը՝ Պօլիքսէն: Լէօնտը լինում է Սիցիլիայի թագաւորը, իսկ Պօլիքսէնը՝ Բօնէմիայի:

Այս երկու թագաւորները հասակակից են լինում. մանկութեան ժամանակ միասին են ուսում առնում և սիրով բարեկամանում, չընայած որ բնաւորութեամբ շատ էին տարբերում միմեանցից:

Պատանի Լէօնտը շատ էր սիրում գրքեր կարդալ, և դեռ մանուկ՝ այնքան տեղեկութիւններ էր հաւաքել այս ու այն գրքից, որ իրանից մեծերը հազիւ գիտէին: Շատ կարգալը շատ էլ ճարտարացրել և ձոխացրել էր նրա լեզուն: Նա սիրում էր վիճել զանազան նիւթերի մասին և վիճելիս մեծ սրամտութիւն էր ցոյց տալիս ու յաղթում էր հակառակորդներին: Ծնողները և բոլոր պալատականները երեսին գովում էին նրան և հիանալով ասում, որ նա շատ խելօք երեխայ է և մեծ ապագայ է խոստանում: Այս գովասանքից նա մեծամտում էր, նրա մէջ զարգանում էր ինքնասիրութիւնն ու կամապաշտութիւնը և հասնում այն աստիճանի, որ իր կարծիքը համարում էր անսխալական. էլ ոչ ոքի թոյլ չէր տալիս իրան ընդգիմախօսելու: Այս ինքնահաւանութիւնը նրան այն աստիճանի հասցրեց, որ ծնողներն սկսեցին այլ ևս երես չըտալ,

բայց նա հիմա էլ սկսեց երևակայել, որ իրան չեն սիրում, չեն գնահատում իր արժանիքները: Երևակայում էր չեղած և չըլինելի բաներ և շաբաթներով ինքն իրան տանջում, մինչև զգում էր վերջապէս իր սխալը, սկսում էր զղջալ դառնապէս, բայց շատ անգամ ուշ էր լինում և բանը բանից անցած: Սակայն պէտք է ասել, որ չընայած նրա կասկածոտ բնաւորութեանը և ուրիշ պակասութիւններին, նրա սիրտը մտքին մասնակից չէր և միշտ մնում էր բարի, սրա համար էլ սիրում էին նրան:

Այլ բնաւորութեան տէր էր Պօլիքսէնը: Նա պարզ էր, ինչպէս մի վճիռ աղբիւր, որ մէջին իրան պղտորող ոչինչ չի ունենում: Նրա սրտումըն ու մտքումը այնպէս բան չկար, որ նրան տանջէր ու մաշէր: Նա միշտ ուրախ էր, միշտ զւարթ. սիրում էր կատակներ անել, զւարճանալ ու զւարճացնել ընկերներին. աւելի որսորդութիւն և գանազան մարդմունքներ էր սիրում, քան զբքերի մէջ թաղւել, որ տեսնի ինչ գաղտնիքներ կան նրանցում: Պօլիքսէնը չէր քննադատում Լէօնտի պակասութիւնները, չէր էլ նկատում, այլ անկեղծ կերպով սիրում էր նրան իբրև ընկերոջը և Լէօնտան էլ զգալով այդ նոյնպէս սիրում էր նրան: Նրանց այս բարեկամութիւնը աւելի ամրացաւ, երբ որ մեծացան և թագաւոր դարձան երկուսն էլ: Հեռու լինելով իրարից մեծ տարածութիւնով, ծովերով ու ցամաքներով, իրանց բարեկամութիւնը շարունակում էին

պահպանել նամակներով, ընծաներով և դեսպաններով:

Սրանք միաժամանակ ամուսնացան՝ երկուսն էլ իրանց սրտի ուզածների հետ, և երկուսն էլ ունեցան մի մի որդի, որոնց սիրում էին ամենաքնքուշ սիրով և փայփայած պահում, իբրև գահաժառնագնեքի: Լէօնտի որդու անունն էր Մամիլ, որ մի շատ գեղեցիկ և խելօք մանուկ էր, իսկ Պօլիքսէնի որդու անունը Փլօրիզէլ, նոյնպէս գեղեցիկ և շատ աշխոյժ:

Այս դէպքից շատ չանցած՝ Պօլիքսէնը զըրկւեց իր ամուսնուց: Նա իր կեանքումը առաջին անգամ զգաց ծանր կսկիծ և ընկաւ մի անմըխիթար վիճակի մէջ: Այս տխուր լուրը շուտ հասաւ Լէօնտին և նա շտապեց մխիթարական նամակ գրել Պօլիքսէնին և հրաւիրել իր մօտ, որ սփոփէ նրան ու փարատէ տխրութիւնը:

Պօլիքսէնը սիրով ընդունեց բարեկամի հրաւերը և գնաց Սիցիլիա, ուր և մնաց մօտ ինն ամիս: Էլ ինչ զւարճութիւն, ինչ ուրախութիւն ասես, որ ցոյց չըտւաւ Լէօնտը Պօլիքսէնին: Խնջոյքներ, պարեր, խաղեր, որսորդական և այլ հանդէսներ, մէկը միւսից աւելի հիանալի ու զւարճալի:

Լէօնտի կինը, Հերմիօնա թագուհին, իբրև բարի տանտիրուհի, զգալով Պօլիքսէնի կրած վշտի ծանրութիւնը, սիրալիրութեան կողմից յետ չէր մնում իր ամուսին թագաւորից և ամեն կերպ աշխատում էր սփոփել Պօլիքսէնին և փարատել նրա տխրութիւնը:

Եւ իրաւի, Պօլիքսէնը բաւականին կազդուր-
ւեց հոգեպէս և այնպէս համարեց, որ իր սե-
փական տանն է գտնուում և ոչ թէ մի օտար
տեղ: Նա՛ ամենից շատ՝ գոհ էր Հերմիօնայի սի-
րալիր վերաբերմունքից, նրա բարձր առաքինու-
թիւնից որպէս կնոջ և մօր, և սկսեց նայել նը-
րա վրայ, իբրև իր հարազատ քրոջ, իբրև մի
երկնային բարի և մխիթարիչ հրեշտակի վրայ:

Պօլիքսէնի այս սուրբ և անբիծ մօտիկու-
թիւնը Հերմիօնայի հետ՝ կասկածոտ Լէօնտի վրայ
հակառակ սպաւորութիւն արաւ: Նրա հին ցաւը
բռնեց, սկսեց երեւակայել չեղած և չըլինելի բա-
ներ: Սկսեց հետամուտ լինել նրանց, որ տեսնի
երկուսով ի՞նչ են խօսում, ի՞նչ են անում, ի՞նչ
են մտադիր. չըլինի՞ թէ իր կեանքի դէմ դաւ են
նիւթում, չըլինի՞ թէ Պօլիքսէնն ուզում է յա-
փշտակել թագուհուն... Ի՞նչ զարմանալու բան
կըլինի,—ասում է ինքն իրան,—միթէ քի՛չ են
եղել այդպիսի յափշտակութիւններ... Ինչքան եմ
կարգացել ես դրա նման պատմութիւններ:

Լէօնտի այս կասկածները նրա ներսը՝ կար-
ծես՝ ճիճուններ էին դառնում և ուտում լերդ ու
թոքը, սիրտն ու աղիքները, էլ ոչ գիշերը քուն
ունէր, ոչ ցերեկը հանգիստ:

Մինչ այս, մինչ այն, Պօլիքսէնը ժամանակ
համարեց վերադառնալ իր երկիրը. և սկսեց
պատրաստել ուղևորւելու: Այս հանգամանքից
օգուտ քաղելով Լէօնտը՝ ուզեց փորձել բարեկա-
մին, այսինքն ուզեց փորձութեան մէջ զցել նը-
րան, առաջարկելով, որ էլի մի շաբաթ մնայ:

Պօլիքսէնը չուզեց մնալ, առարկելով, թէ ա-
մաշում է, որ այսքան ժամանակ մոռացութեան
է տւել իր թագաւորութիւնը:

Լէօնտը դիմեց թագուհու միջնորդութեանը,
որ նա համոզէ Պօլիքսէնին, որ էլի մնայ մի քա-
նի օր:

Թագուհու յորդորները այնքան սրտաշարժ
էին, այնքան անկեղծ, բարեկամական և սիրա-
լիր, որ Պօլիքսէնը այլ ևս չըկարաց զսպել իր
յուզմունքը, արցունքն աչքերին բռնեց նրա ձեռ-
քը և համբուրելով ասեց.

—Սուտ չի ասած, որ ճշմարիտ բարեկա-
մին անբախտութեան ժամանակ կըճանաչեն: Ես
համապատասխան խօսք չեմ գտնում յայտնելու
իմ երախտադիտութեան զգացմունքը դէպի ձեր
սիրալիր հիւրնկալութիւնը: Պատրաստ եմ մնալու
անս էլի մի քանի օր...

2

Թագուհին շատ ուրախ էր, որ կարողացաւ
համոզել Պօլիքսէնին, որ մնայ, բայց Լէօնտի
կասկածոտութիւնը աւելի սաստկացաւ և դառաւ
համոզմունք: Նա սկսեց ինքն իրան մրմնջալ.—
«Ես այնքան խնդրեցի, չըմնաց, բայց երբ կիսո
խնդրեց, իսկոյն համաձայնեց: Եւ ի՞նչ քնքշու-
թեամբ համբուրեց կնոջս ձեռքը... Չէ, դրանց
միաքը ծուռ է, ուզում են ինձ ոչնչացնել...»

Ահա այս տեսակ ցնորքներով լցւած, Լէօն-
տը կանչում է իր հաւատարիմ պալատական
Քամիլին և ուղղակի ասում է, որ իր կեանքին

վտանգ է սպառնում թագուհու և Պօլիքսէնի կողմից:

Քամիլը, որ մի խելքը գլխին առողջամիտ և ազնիւ մարդ էր, և շատ լաւ էր ճանաչում ամենքին էլ, սկսեց աներկիւղ յանդիմանել թագաւորին և ասել.

— Տէր իմ թագաւոր, ոչ ոք բացի ձեզանից չէր համարձակիլ իմ առջև այդպէս անպառելի թագուհուն և մնալ անպատիժ: Դուք էլ ձեր կեանքումը դժւար թէ ասած լինիք դրանից աւելի սուտ և նողկալի խօսքեր: Դուք հիւանդացել էք խանդացաւով և անմիտ կասկածներ էք յղանում...

Բայց ո՞ւմ կասես... Թագաւորը, որ չէր սիրում իր կարծածի և պնդածի հակառակը լսել, Քամիլի յանդիմանութիւնից աւելի զայրացաւ, և պահանջեց, որ նա, եթէ իրան հաւատարիմ հպատակ է համարում, եթէ ուզում է աւելի մեծ պատիւներով բարձրացած լինիլ թագաւորի կողմից, եթէ չի ուզում զրկւել բոլոր ունեցած շունեցածից, այլ և կեանքից, պէտք է վերացնէ Պօլիքսէնին մի որևէ խմելիքով...

Քամիլը տեսաւ, որ թագաւորին չըպիտի կարողանայ յետ կասեցնել իր դիտաւորութիւնից, ձևացրեց, որ պատրաստ է կատարելու նրա հրամանը, խնդրեց միայն, որ ժամանակ տայ իրան՝ այդ գործը կատարելու այնպէս, որ իրանցից ոչ ոք կասկածի տակ չընկնի...

Թագաւորին այսպէս հանգստացնելուց յետոյ, Քամիլը մտածեց, թէ ինչպէս փրկէ Պօլիք-

սէնի կեանքը վերահաս վտանգից: Պօլիքսէնն ինքրն էլ նկատել էր Լէօնտի սառնութիւնը, նրա յարաբերութեան փոխելիք. ուզում էր իմանալ դրա պատճառը: Նա առաջինը խօսեց այդ մասին Քամիլի հետ: Քամիլը խոստովանեց ամեն ինչ մանրամասն և առաջարկեց փախչել միասին. ուրիշ ելք չըկար փրկութեան: Վճռեցին այլ ևս չուշանալ և ճանապարհ ընկնել հէնց առաջիկայ գիշերը: Քաղաքի դռները բանալիքները Քամիլի ձեռքումն էին, չըլինէին էլ, ո՞վ կարող էր դուռ փակել նրա առջև, քանի որ՝ թագաւորից յետոյ՝ նա էր երկրի առաջին տէրը: Նա ցերեկը դուրս ուղարկեց Պօլիքսէնի բոլոր շքախումբը քաղաքից քիչ-քիչ, որ նկատելի չը լինէին, իսկ երեկոյին, երբ մութն ընկաւ, ինքն ու Պօլիքսէնն էլ դուրս գնացին և նրանց յետ միանալով՝ նաւ նստեցին և յաջողակ քամու հանդիպելով՝ ողջ առողջ հասան Բօհէմիա:

3

Հիմա էլ ո՞վ կարող էր զսպել Լէօնտի կատաղութիւնը. էլ ո՞վ կարող էր համոզել նրան, որ մեղաւորն ինքն է: Հէնց որ իմացաւ Քամիլի փախուստը Պօլիքսէնի հետ, հաստատուեց իր յամառութեան մէջ, որ անկասկած դաւադրութիւն է եղել իր կեանքի դէմ, և որ այդ դաւադրութեան մէջ խառն է եղել և Քամիլը:

Այսպէս գլուխը չարաթոյն կասկածներով ամբարած՝ մտնում է թագուհու մօտ, որին համարում էր գլխաւոր դաւադիրը, և բոլոր պաշ-

տօնեաների առջև ինչ լափ ասես՝ նրա գլխին է ածում ամենաստոր հայհոյանքներով:

Խեղճ կինը, որ տեղն ու տեղը մի սրբութիւն էր, մի անմեղութիւն, որ արդէն երկունքի վրայ էլ էր, որքան աշխատում էր հաւատացնել մարդուն իր անմեղութիւնը, որ նա բնաւ տեղեկութիւն չունի նրանց փախուստի մասին և և չըզիտէ, թէ ի՞նչ առիթ ունէին նրանք այդպէս վարւելու, բայց թագաւորը կարծես խլացել էր, նրա ասածները լսել չէր ուզում: Տըղային գրկիցը խլեց կոշտութեամբ և հրամայեց, որ մօրը տանեն բանտ, որպէս պետական յանցաւորի, որպէս Նորին Մեծութեան կեանքի դէմ մահ նիւթողի:

— Ի՞նչ կարող եմ ասել, — ասեց թագուհին: — Ինձ մնում է միայն սպասել, մինչև երկինքը կընայէ մեզ վրայ աւելի գթոտ և քաղցր դէմքով: Ձեզ բոլորիդ, որ կանգնած էք իմ շուրջը, պէտք է ասեմ, որ ես չունիմ այն լալկանութիւնը, որ յատուկ է առհասարակ կին սեռին: Գուցէ դուք էլ իմ աչքերում արցունք չըտեսնելով՝ չըխղճաք ինձ: Բայց գիտացէք, որ իմ վիշտն այնքան մեծ է և այնքան այրող, որ նրբան զովացնել կարելի չէ արցունքի ոչ մի յորգառատ հեղեղով: Խնդրեմ ինձ դատէք ձեր սրտերի թելադրութեամբ, իսկ դրանից յետոյ թող լինի այնպէս, ինչպէս կամենում է թագաւորը: — Մնաք բարեաւ, տէր իմ թագաւոր. ոչ մի անգամ չեմ ցանկացել տեսնել քեզ վշտի արցունք թափելիս, բայց, միտներըդ պահեցէք,

չուտով կըզղջաք, կըսկսէք արտասուել դառնապէս, բայց ուշ կըլինի...

Թագուհին՝ այս խօսքերն ասելուց յետոյ՝ անտրտուն չհղատակելով իր ճակատագրին, և հանգիստ խղճով, որպէս միայն արդարներն են լինում, շրջապատւած սգաւոր շքախմբով՝ գնաց դէպի բանտ:

Թագաւորի այս անիրաւացի խստութիւնը և անարդար վճիռը բոլոր պալատականների մէջ խոր յուզմունք առաջացրեց, և նրանցից մէկը՝ ծերունագարդ Անտիգոնը, — որի կինը՝ Պաուլինան՝ թագուհու ամենամօտիկ խորհրդակիցն ու բարեկամուհին էր, — ուղղակի սկսեց կըշտամբել թագաւորի դժնդակ վարմունքը: Սրա վրայ բարկացաւ թագաւորը և ասեց.

— Իմ ի՞նչ պէտքս են ձեր կարծիքները, ձեր համոզմունքներն ու դատողութիւնները... Ես չեմ միթէ ձեր տէրը, ձեր թագաւորը: Էլ ի՞նչ թագաւոր կըլինեմ, եթէ այն չանեմ, ինչ որ ինքս եմ կամենում: Եթէ ես ձեզ յայտնեցի իմ կնոջ վարմունքը, նրա յանցանքը, այդ արի ես միայն իմ սրտի բարութիւնից, որ դուք՝ տխմարները՝ չիմացաք գնահատել: Դուք ձեր յիմարութիւնից չէք տեսնում իմ տեսածը, չէք հասկանում իմ հասկացածը, էլ ի՞նչ կարող եմ իմ անտիքի մասին հարցնել ձեր խորհուրդը: Այս գործի մէջ ամեն ինչ ինձ է վերաբերում, լինի դա վնաս թէ օգուտ, վիշտ թէ ուրախութիւն...

Երբ ինքն իրան պաշտպանողը մի բռնակալ թագաւոր է, կամ՝ թէև խելքը պակաս՝ բայց մի

ինքնակալ իշխան է, որ ճարտար լեզուի հետ թուր էլ ունի ձեռին, և իրաւունք՝ իրեն չըլսողներէ գլուխը թոցնելու, էլ ի՞նչ կարող ես անել այդ դէպքում:

Բայց Լէօնարը անվեհեր բռնակալներէից չէր: Նրա գոռոցը սաստիկ էր, բայց այդ ընդէին նա նմանում էր մի արջի, որ իր ահիցն է գոռում: Նա վախենում էր ժողովրդի յուզմունքից: Ի՞նչ կարող էր անել, եթէ յանկարծ ժողովուրդը ոտքի կանգնէր և աղաղակէր. «էլ չենք ուզում քեզ, հեռացիր գահից և թող տեղդ արժանաւորին»: Ի՞նչ կարող էր անել, եթէ պալատականները խօսք մէկ անէին և մէկ գիշեր տեղնուտեղ ոչընչացնէին: Նա գոռալով՝ դրանց վրայ էր ուզում ազդել, դրանց էր ուզում հաւատացրած լինել, որ ինքն արդար է, որ իր ասածն ուղիղ է...

Լէօնտի պէս կասկածոտ մարդը, ամեն հողմից շարժւողը, եթէ ոչ ոք նրա մասին չար խորհուրդ չունենար էլ, նա ինքը կըստեղծէր երեւակայութեան մէջ և կըսկսէր իր շտաբիցն անգամ վախենալ, իր արքայական պալատը մի դրժոխքի կըփոխարկէր և ինքը ողջ-ողջ մէջին կըտանջւէր...

Նա իր իշխանութիւնը համարելով անսահման, այսուամենայնիւ ասում է. «Որպէս զի ձեզ նման տխմարների կասկածը փարատւած լինի և կարողանաք լսել ճշմարտութիւնը ձեր ականջովը, ես երկու յուսալի մարդ կուղարկեմ Ապօլօնի պատգամախօսի մօտ, որ նա յայտնէ մեզ եղելութիւնը այնպէս, ինչպէս կայ:

էլ ի՞նչ էք ուզում, սրանից էլ լաւ ապացոյց, որ մարդը անարդարութիւն չի գործում... Ուրեմն կարող էք սպասողական դիրք բռնել և հանդարտ կենալ, մինչև դատը տեսնուի:

4

Խեղճ թագուհին բանտումն ազատեց երկունքից և բերաւ մի շատ սիրուն աղջիկ: Այդ երեխան մօր միակ մխիթարութիւնը դառաւ բանտի միայնութեան մէջ, ուր պալատականներից ոչ ոք չէր կարողանում գալ թագաւորի երկիւղից: Ոչ ոք իրաւունք չունէր յիշեցնել թագաւորին թագուհու քաջած նեղութիւնները, նրա կարօտութիւնները և վերջապէս նրա անմեղութիւնը: Բայց ինչ որ այր մարդկանցից ոչ ոք չէր համարձակում անել, այն արաւ մի կին: Դա էր Պաուլինան՝ Անտիգոնի կինը:

Տիկին Պաուլինան հնարք գտաւ մտնել բանտը, ուր չէր կարելի մտնել առանց բարձրագոյն հրամանի, և խնդրեց թագուհուն, որ նորածին դուստրը յանձնէ իրան, գուցէ նրանով կարողանայ շարժել անխելքացած բռնաւորի սիրտը և թագուհու անմեղութիւնն սպացուցանել նորածին գաւակի հօր հետ ունեցած նամուլութիւնովը:

Լէօնարը հանգստութիւն չունէր ոչ գիշերը և ոչ ցերեկը: Նա զգում էր, որ իրեն շրջապատողները, թէև ոչինչ չէին ասում աշխարհ, բայց ծածուկ, իրանց մէջ, դատապարտում էին նրան:

Սրա վրայ աւելացաւ և որդու հոգսը: Խեղճ երեխան չէր իմանում, թէ ինչ էր պատճառը,

որ հայրն այնքան բարկացած էր մօր վրայ, որ զրկել էր նրանց իրար տեսութիւնից: Նա սկսել էր բաշել մօր կարօտը, քունը կտրուել էր, ախորժակը փակուել, նիհարել, դեղնել:

Թագաւորը՝ անձնատուր եղած իր բարկութեանը՝ սպասում էր պատգամախօսի պատասխանին, որ սկսէին տեսնել թագուհու դատը, իսկ մինչև այդ, փակուել էր իր սենեակներում և հըրամայել էր, որ ոչ ոքի թոյլ չըտան իր մօտ ներս գնալու:

Այսպիսի մի հոգեկան վիճակի մէջ էր թագաւորը, երբ տիկին Պաուլինան՝ ամեն պատիժ աչքի տակ առած՝ երեխան ձեռքին ներս մտաւ նրա սենեակը:

Երեխայի տեսքը ոչ միայն չըփափկացրեց հօր սիրտը, այլ աւելի ևս կարծրացրեց: Նա Պաուլինային մասնակից համարելով թագուհու դաւաճանութեանը, կոպիտ հայնոյանքներով անարգեց խեղճ տիկնոջը: Շատ աղաչեց, պաղատեց տիկինը, ընկաւ թագաւորի ոտքերը, բայց բոլորն անօգուտ: Վերջը երեխան վայր դրաւ հօր ոտքերի մօտ, աղաչեցին և միւս պալատականները, որոնք մինչև այդ լուռ հանդիսատես էին, բայց թագաւորը՝ ինքն իրան մոռացած՝ հրամայեց Անտիգոնին, որին նոյնպէս դաւաճան էր համարում, որ վերցնէ երեխան և իսկոյն զըցէ կրակը:

Բոլոր սառած ու փէտացած պալատականները՝ ամենքը միասին՝ ծունկ չոքեցին և արտասելով աղաչեցին, որ փոխէ այդ արիւնը-

նուշա դատաւիճիւրը, եթէ ոչ՝ դա շատ վատ հետևանք կունենայ նոյն իսկ թագաւորի համար...

Թագաւորը մի ըսպէ ուշքի եկաւ, նա զգաց, որ իրաւի, ժողովրդի համբերութիւնը կարող է հատնել և իրեն պահից զրկել, հրամայեց Անտիգոնին, որ երեխային տանէ իր թագաւորութիւնից՝ մի ուրիշ տէրութիւն և այնտեղ ձգէ մի ամայի տեղ. թող այնտեղ ապրեցնէ դրան դիպւածը, եթէ ճակատին մահ չի գրւած...

Անտիգոնը մի բարեսիրտ մարդ էր և թագաւորին հլու հպատակ: Նա հաւատացած էր, որ թագուհին անմեղ է և զուր է բանտարկւած: Շատ էլ վրդովւած էր թագաւորի անարդարութիւնից, բայց նա չունէր իր կնոջ առնական քաջութիւնը իր զգացածն արտայայտելու համար: Շատ էր նշանակութիւն տալիս իր պալատական կեանքին ու դիրքին, որից չէր ուզում զրկուել ոչ մի գնով: Այս պատճառով նա չէր կարող չըկատարել թագաւորի հրամանը ամենայն ճշտութեամբ և հաւատարմութեամբ:

Արտասուքն աչքերին՝ Անտիգոնը յատակից վերցրեց երեխային և համբուրելով ասաց.— Ե՛կ գնանք, գժբախտ երեխայ: Թող Անյայտ զօրութիւնը սովրեցնէ գազաններին և գիշատիչ թրուչուններին, որ գան քո ծծմայրդ դառնան: Ձէ՛ որ ասում են՝ նոյն իսկ գայլերն ու արջերը շատ անգամ խղճացել են ընկեցիկ մանուկներին և կերակրել են նրանց: Մնա՛ք բարեաւ, տէր իմ թագաւոր, թող ասուածներն ուղարկեն ձեզ աւելի շատ ողորմութիւն, բան դուք արժանի էք

ձեր այսպիսի վարմունքի համար: Թող Անյայտը պաշտպանէ քեզ իր խնամքովը, ով փոքրիկ ըստեղծւած, որիդ հարգատ հայրըդ կորստի է դատապարտել... Այս խօսքերով ապարանքից դուրս եկաւ Անտիգոնը՝ երեխան գրկած...

Հէնց այդ միջոցին թագաւորն իմացաւ, որ պատգամախօսի պատասխանն ստացել է արդէն, հրամայեց, որ իսկոյն հրապարակական ատենն կազմեն թագուհուն դատելու համար:

5

Ամբողջ քաղաքը, ամբողջ թագաւորութեան մէջ ամենքն էլ իմացել էին արդէն, թէ ինչ յանցանքի մէջ է մեղադրուում թագուհին, որին պիտի դատէին հրապարակով ամենքի աչքի առջև: Ամենքն էլ գովում և փառաբանում էին թագուհուն, ոչ ոք չըկար որ հաւատար, թէ նա կարող էր դաւաճանել թագաւորին՝ իր գաւակներէ հօրը: Նա, որ օրինակելի մայր էր, որ մայրասիրտ քնքուշ կին էր ամուսնու համար: Ամենքն էլ գիտէին, որ նա մի գոհ է թագաւորի անտեղի խանդոտութեան, նրա կասկածոտութեան, ինքնամոռացութեան և բռնակալութեան: Սրա համար էլ ամենքն էլ անհամբեր սպասում էին դատի հետևանքին, յուսալով որ թագուհին կարգարանայ անշուշտ և թագաւորը կըմնայ սևերես:

Դատարանի մեծ շէնքը առաւօտից սկսւած լցւում էր ժողովրդով, որ գալիս էին քաղաքի ամեն ծայրից և երկրի ամեն կողմերից: Ներսեն գալիս անա թագաւորը, դատաւորները և

բազմում իրենց տեղերում: Առաջին խօսողը լինում է թագաւորը, որ ասում է.

— Ահա մի դատաստան, որ՝ ցաւելով պիտի ասեմ՝ կտրատում է իմ սիրտը: Մեղադրուողը աշխարհիս երևելի թագաւորներէ մէկի դուստրն է և մեր էլ ամուսինը, որ միշտ փայփայլած է եղել մեր կողմից ամենաշերմ սիրով: Վճռելով, որ դատը տեսնւի հրապարակով, դրանով ուզեցել եմ ցրել ամեն կասկած, որ կարող էին վերագրել ինձ: Թող տեսնեն ամենքն էլ իրանց աչքովը և լսեն իրանց տկանջովը, որ այստեղ պիտի պաշտպանւի արդարութիւնը, պիտի անաշառ լինին դատաւորները: Թող ներս բերեն բանտարկեալին:

Ներս է գալիս թագուհին՝ տիկին Պատուխնայի ձեռքին կռթնած: Նա որ սրանից դեռ մի ամիս առաջ երջանիկ ամուսին էր և մայր, այժմ նւաստացրած էր մինչև այն աստիճան, որ ամենքն էլ վշտակից եղան նրան: Կնանիքն սկսեցին լալ. թագաւորը երեսը շրջեց և գոռաց.

— Շնւտ արէք, կարգացէք մեղադրութիւնը: Դատաւորներից մէկը վեր կացաւ և բարձրաձայն կարգաց, դիմելով թագուհուն:

— Հերմիօնա, ամուսին Սիցիլիայի արքայի՝ արժանաւոր Լէօնտի, դու մեղադրուում ես նախ պետական դաւաճանութեան մէջ, երկրորդ՝ ամուսնական ուխտադանցութեան մէջ, և երրորդ՝ դաւաճանութիւն նէւթելում թագաւորի կեանքի դէմ Քամիլի հետ միասին: Բայց երբ որ ձեր չար մտադրութիւնը բացել է, այն-

79819-69



ժամանակ դու, Հերմիօնա, հակառակ տւած ուխտիդ և հաւատարիմ հպատակութեան պտրտքիդ՝ օգնել ես նրանց ազատելուն և գիշերով փախչելուն: Ի՞նչ կարող ես ասել սրա դէմ, ինչո՞վ կարող ես քեզ արդարացնել:

Թագուհին, որ առանց յուզելու և վրդովւելու լսել էր բոլոր մեղադրութիւնը, վեր կացաւ և անվեհեր ու դողդոջուն ձայնով պատասխանեց.

— Ես այն կասեմ իմ պաշտպանութեան համար, որ բոլորը, ինչ որ այդտեղ ասած է թէ իմ և թէ միւսների մասին, ծայրէծայր սուտ է և հնարովի: Թէ ես մեղաւոր չեմ, հարկ չըկայ կրկնելու: Բայց ո՞վ պիտի ինձ արդարացնէ: Քանի որ ինձ մեղադրողը գլխաւոր դատաւորն ինքն է, որի միակ ցանկութիւնն է, որ ես անպատճառ մեղաւոր լինիմ, մի՞թէ նոյն դատաւորը իր ցանկութեան հակառակ վճիռ կըկայացնէ: Ոչ, ես ոչ մի յոյս չունիմ ներկայ դատաւորների անաչառութեան վրայ: Իմ միակ յոյսս ու ապաւէնս երկնային աստուածներն են, որոնք ամենիցս լաւ են տեսնում մեր խորհուրդներն ու գործքերը, լինին նրանք լաւ թէ վատ: Ես կըխնդրեմ որ կարգացւի պատգամախօսի պատասխանը: Թող աստուածներն իրանք լինին իմ դատաւորները:

Ժողովրդի կողմից լսում է մի խուլ, բայց միաձայն շշուշ.— Կարգացւին, կարգացւին...

Դատաւորներից մէկը կանչեց պատգամաբերներին, որ հանդիսաւոր կերպով երգեն թրքի վրայ, որ նրանք այդ պատասխանն իսկապէս

ստացել են Ապօլօնի տաճարի քուրմերից այնպէս կնքած, չեն բաց արել և չըգիտեն ինչ է պարունակում նրա մէջ: Այս արարողութիւնը կատարելուց յետոյ կարգում է հետևեալը.

Հերմիօնան մեղաւոր չէ՞ ոչ մի բանում: Քամիլը հաւատարիմ հպատակ է: Լէօնտը խանդոտ և խելագարւած բռնակալ է. նա իր նորածին աղջիկը կորցնել է տւել: Լէօնտը կըմնայ անժառանգ, եթէ կորցրածը չըգտնուի:

Այս պատգամը կարգալուց յետոյ բոլոր հանդիսականները միաձայն խնդութեան աղաղակ բարձրացրին: Այս խնդութեանը չըմասնակցեց միայն թագաւորը, և հարցրեց դատաւորին.

— Արդեօք այնպէս կարգացիր, ինչպէս որ գրւած է:

— Այո, տէր իմ, — պատասխանեց դատաւորը:

— Ուրեմն պատգամախօսը սուտ է ասել, — բացականչեց թագաւորը բարկանալով: Շարունակեցէք դատավարութիւնը. դա մի անխիղճ խարէութիւն է:

Բայց թագաւորն իր նպատակին չըհասաւ: Նա ենթադրում էր, որ ինքն անժառանգ չէ, քանի որ կենդանի է որդին, ուրեմն սուտ է պատգամախօսի ասածն այդ մասին: Եթէ այդ սուտ է, ուրմն բոլորն էլ սուտ են: Եւ մինչդեռ կատաղութիւնից բերանը փրփրած արտասնում էր վերջին խօսքերը, դահլիճը մտաւ սփրթնած ծառան և հեկեկալով յայտարարեց, որ թագաժառանգը՝ լսելով որ մօրը դատի են ենթարկել,

երկիւղից ուշագնաց եղաւ և... վախճանւեց...

—Օ... երկնային բարկութիւնը պատժում է ինձ իմ աններելի յանցանքիս համար,— այսպէս սթափուեց թագաւորը ինքնամոռացութիւնից թէ և շատ ուշ, երբ բանը բանից անց էր կացել:

Թագուհին՝ որդու մահը լսելուն պէս՝ նւազած ընկաւ Պատւինայի գիրկը: Թագաւորը խընդրեց մօտը եղողներին, որ զգուշութեամբ դուրս տանեն նրան, ուշքի բերեն և ամեն կերպ աշխատեն մահից ազատել նրա կեանքը:

Քիչ-քիչ ուշքի եկաւ թագաւորը և հասկացաւ, թէ իրաւի, ինչ կըլինէր հետևանքը, եթէ Քամիլը կատարէր նրա առաջարկութիւնը Պօլիքսէնի վերաբերմամբ: Նոր հասկացաւ, թէ ինչ ազնիւ և ինչքան հաւատարիմ մարդ է եղել Քամիլը, որի յարգը չի իմացել ինքը: Նա արդէն պատրաստ էր ծնկաչոք ներողութիւն խնդրել թագուհուց և վերանորոգել իր բարեկամութիւնը Պօլիքսէնի հետ. բայց ճակատագիրը պատրաստել էր նրա պէս ամուսնուն և հօրը արժանաւոր հատուցումն: Որդու մահւան լուրից դեռ մի քանի րոպէ չանցած, նոյն դահլիճը մտաւ տիկին Պատւինայի և յայտարարեց, որ թագուհին չըկարաց ասնել վերջին հարւածը և նոյնպէս վախճանւեց: Տիկինը յայտնելով այս լուրը, միևնոյն ժամանակ սկսեց յանդիմանել թագաւորին կծու խօսքերով: Թագաւորը լսում էր նրան լուռ. խօսք զգալով իր մեղաւորութիւնը և վերջումը ասեց տիկնոջը.

— Դու ինչ որ ասում ես, Պատւինա, բոլորն էլ ուղիղ են... Ես ամենից վատն եմ աշխար-

հումս և արժանի եմ, որ բոլոր լեզուները կըտրատեն իմ սիրտը ամենադառն կշտամբանքներով... Ես այդ աւելի ուրախութեամբ կըտանեմ, քան եթէ դառնայի խղճալու առարկայ: Տար ինձ կնոջս և որդուս դիակների մօտ: Թող նրանք միասին պառկեն դագաղում: Թող նրանց յուշարձանի վրայ գրւի, թէ ով է եղել նրանց մահւան պատճառը, որպէս զի դարերով յիշւի իմ վարմունքը, որ արժանի է ամեն տեսակ անարգանքի: Ես ամենայն օր կայցելեմ նրանց դամբարանը և միակ մխիթարութիւնս կըլինի այնտեղ թափած արտասուքս:

Ամօթից ու կսկծից ընկճւած թագաւորին դուրս տարան դատարանի դահլիճից: Որպէս զի նրա կսկիծը չըմեծացնեն, ննջեցեալների յուղարկաւորութեան հանդէսը չբերկարացրին, այլ այնպէս շուտափոյթ թաղեցին, որ թագաւորը հագիւ կարողացաւ տեսնել միայն որդու երեսը...

6

Հիմա պատմենք Անտիգոնի մասին, թէ նա ուր տարաւ երեխային և ինչ արաւ: Ծերունի Անտիգոնը երեխայի հետ նաւորդում էր Սիցիլիայից դէպի հիւսիս, առանց իմանալու թէ ուր պիտի գնայ և ինչ ցամաքում պիտի իջնի: Մի գիշեր երազումը երևում է նրան թագուհին լուսեղէն հագուստով և ասում. «Ով բարի Անտիգոն, երեխայիս կըտանես և կըգնես Բոհեմիայի ժայռերի մօտ, ուր կընկնի ձեր նաւը՝ ալիքների ուժովը մղւած: Երեխայի անունը կըգնես Պէրի-

տա, (որ կընշանակէ *կորած*): Այդ անունը կը գրես
և կը գնես հետը միւս բոլոր զարգերի և գոհար-
ների հետ: Իսկ դու, որ յանձն առար կորցնե-
լու իմ անմեղ երեխային, էլ չես տեսնիլ քո
կնոջ՝ Պաուլինայի երեսը. աստուածները կը պատ-
ժեն քեզ»: Այս ասում է թագուհին և իսկոյն
վերանում, ինչպէս մի երկնային երևոյթ: Ան-
տիգոնը զարթնում է վախեցած, կարծում է թէ
տեսածը երազ չէր, այլ մի տեսիլք կամ իրո-
ղութիւն:

Իրաւի, այդ տեսիլքից յետոյ շուտով բար-
ձրանում է մի անեղ փոթորիկ և նաւը՝ զօրեղ
ալիքներից մղւած՝ ընկնում է մի անապատ ծո-
վափ: Նաւաստիներն ասում են, որ այս ցամա-
քը պատկանում է Բօհեմիային¹⁾: Անտիգոնը, որ
լսում է այդ, իսկոյն միտն է բերում թագուհու
պատէրը, դուրս է գալիս ցամաք՝ երեխան գըր-
կած, և բաւական հեռանալով ժայռերի մէջ, քա-
մուց պաշտպանւած մի լաւ տեղ է գտնում և
բարուրում փաթաթւած երեխան դնում է այն-
տեղ փափուկ խոտերի վրայ: Նրա մօտ է դնում
և հետը բերած թանգարժէք ծրարը, ուր դնում
է մի տոմսակ, վրան գրած «Պէրիտա»:

Երեխան տեղաւորելուց յետոյ Անտիգոնն
ուզում էր վերագառնալ նաւ, հէնց այդ ընդ-
ին փոթորիկը կրկնեց մի չը տեսնւած սաստ-
կութեամբ և նաւից օգնութեան կանչող ձայ-

¹⁾ Յայտնի է, որ աշխարհագրութեան մէջ ծովով
չի կարելի ընկնել Բօհեմիա, բայց հէքիաթներում կա-
րելի է:

ներ լսեցին: Նա սկսեց վազել անտառի միջով,
որ տեսնի ինչ է պատահել, հէնց այդ միջոցին
նրա դէմ դուրս եկաւ որսորդներից փախած մի
ամեհի արջ, որ նրան առաւ գիրկը և սկսեց ջար-
դել արջաւարի:

Այս դէպքից հազիւ մի քանի ընդէ անցած՝
բարուրած երեխայի մօտ կանգնում է մի ծե-
րունի հավիւ, որ իր կորած այծերն էր որոնում
այդ քարածերպերում: Հովիւը գննում է երե-
խային, տեսնում է որ նա մի շատ սիրուն ու
փափլիկ աղջիկ է, ողջառողջ և քնած է մուշ-
մուշ: Տեսնում է ծրարի մէջ եղած հագին հա-
րստութիւնը և ուրախութիւնից իսպառ մոռա-
նում է իր կորած ոչխարները, ասելով՝ մեծ
կորածը սա էր, որ գտայ հա:

Շուտով հովիւի մօտ է վազում և նրա որ-
դին, և սկսում է պատմել, թէ ինչպէս նրա աչ-
քի առջև խորտակեց մի նաւ և բոլոր նաւորդ-
ները ծովի տակն անցան նաւի կտորտանքների
հետ: Եւ աւելացրեց. — Այդ աղէտից աչքս չէի
հեռացրել, որ յանկարծ լսեցի. «օգնեցէ՛ք, օգ-
նեցէ՛ք»... Վազում եմ դէպի ձայնը և ինչ եմ
տեսնում... մի կատաղի արջ, չը գիտեմ որտե-
ղից, մի ճոխ հագնւած մարդ է ձանգը գցել և
սկսել է քրքրել: Տեսայ որ ես օգնել չեմ կարող,
վազեցի որ քեզ իմաց տամ, բայց ուշ է արդէն,
էլ փրկութիւն չը կայ. մարդը ձայնը կտրել էր
որ ես տեսայ...

— Իու էլ շարունակ մեռածների մասին ես
խօսում, — ընդհատեց նրան հայրը, — մէկ տես

անա ես ինչպիսի կենդանի եմ գտել,—մէկ նա-
յիր... կասենաս երկնքից իջած հրեշտակ լինի:
Բայց սա հողեղէն մի աղջիկ է: Եւ տես ինչ
հարուստ օժիտ ունի. թագաւորի աղջիկն էլ այս-
պիսի հարուստ օժիտ չի ունենալ: Մենակ սրա
բարուրը՝ ով գիտէ՝ քանի հազար ոսկի արժէ.
էլ չեմ հաշուում այս անգին գոհարները, այս
զուտ ոսկիքը, մէկ տես անա ինչքան է... Եւ
անուան էլ Պէրիտա է, տես անա գրած է այս-
տեղ: Ի՞նչ լաւ է, որ քիչ ու միչ կարգալ գի-
տեմ: Եւ գիտես ի՞նչ է նշանակում Պէրիտա.
կարծեմ նշանակում է՝ գտնուած... Գիտե՛՛, տը-
ղաս, կախարդները գուշակել էին, որ ես պի-
տի հարստանամ: Ահա կատարւեց նրանց գու-
շակութիւնը: Երևում է, որ աստուածները իրանց
ողորմութիւնը դէպի մեզ են դարձրել: Երախ-
տագէտ լինելու համար մենք մեծ խնամքով կը-
մեծացնենք այս երեխային և սա կըլինի իմ սի-
րունիկ աղջիկս...

—Իմ էլ սիրելի քոյրիկս,—վրայ բերաւ
տղան, չափից դուրս ուրախացած, և գրկեց ե-
րեխային ու ճանապարհ ընկաւ դէպի տուն, որ
այնտեղ շուտով կերակրէ նրան...

7

Այս ուրախալի դէպքից անցել էր ուղիղ
տասնըվեց տարի: Աչք պէտք էր, որ հիմա տես-
նէր Պէրիտային. Նրա աննման գեղեցկութեան
լուրը մօտիկից սկսած՝ տարածւեց մինչև հե-
ոսն, հեոսն, ով գիտէ մինչև սւր... Պէրիտան

ուչ միայն չնաշխարհիկ գեղեցկութիւն ունէր,
այլ և օժտւած էր ժառանգական այնպիսի ձիւ-
քերով, այնպիսի շնորհքներով, որ կարելի էր
տեսնել միայն թագաւորների ապարանքներում
և ոչ թէ հովուական անշուք խրճիթներում: Նրա
խօսք ու զրոյցը, նրա անուշ լեզուը, նրա վարք
ու բարքը, նրա կար ու գործը, նրա նկարներն
ու քանդակները հիացնում, ապշեցնում էին ա-
մենքին: Նրա բարի, գթոտ սիրտը գրաւել էին
ամենքի սէրը:

Երկրի թագաւորը Պօլիքսէնն է: Նա արդէն
բաւական տաքիքաւոր է, բայց դեռ ժիր և ա-
ռոյգ, ինչպէս երիտասարդ: Իսկ որդին՝ Փլօրի-
գէլը, մեծացել, հասունացել է արդէն և շատ
իշխանագնուհի հարսնացուներ երազումը նրան
են տեսնում:

Քամին էլ Պօլիքսէնի մօտ է, նրա միակ
խորհրդակիցն է և սիրելին: Շատ է ուզում վե-
րադառնալ հայրենիք, Սիցիլիա, բայց Պօլիքսէնն
այնպիսի սերտ սիրով է կապւել նրա հետ, որ
էլ չի ուզում կտրւել նրանից, չի ուզում գըր-
կւել նրա բարեկամութիւնից և խելացի խորհուրդ-
ներից: Նա էլ սպասում էր, թէ գուցէ մի այն-
պիսի կարևոր դէպք լինի, որ Պօլիքսէնն ինքը
կարևոր համարի նրան ուղարկել Սիցիլիա: Այդ
դէպքը շուտով վրայ հասաւ շնորհիւ Փլօրիգէլի,
որ թէ հօրը և թէ Քամիլին քաշեց տարաւ Սի-
ցիլիա:

Վերջին օրերը Պօլիքսէնի ականջն էր հասել,
որ իր միակ որդին և թագաժառանգը բոլոր ժա-

մանակը մի հովւի մօտ է անցկացնում, նրա տանից դուրս չի գալիս: Ասում են, որ այդ հովիւը աղքատ մարդ չէ: Նա լաւ տուն ու տեղ ունի, լաւ նիստ ու կաց և հօտերով այժ ու ոչխար և նրանց պահպանող մի քանի տասնեակ հովիւներ: Շատ ժամանակ չէ, ասում են, որ ձեռք է բերել այդ հարստութիւնը, յայտնի չէ, թէ ինչպէս և որտեղից: Նա ունի, ասում են, և մի սիրուն աղջիկ, որին չափից դուրս գովում են: Եւ անա մէկ օր թագաւորն ասում է Քամիլին.

— Ի՞նչ ես կարծում, Քամիլ, արդեօք այդ աղջիկը չէ՞ Յլօրիգէլիս գրաւել: Հարկաւոր չէս համարում արդեօք, որ այդ բանը մենք մեր աչքովը տեսնենք և ստուգենք: Ով զիտէ ինչ կրկնի դրա հետեանքը: Քանի որ դեռ ուշ չէ գուցէ, հարկաւոր է որդուս ազատել այդ խայտառակութիւնից, որ միայն իրան չի վերաբերում, այլ մեր արքայական տոհմին ամբողջապէս: Ուզում է ամուսնանալ, թող ընտրէ իր հաւասարները միջից, որին կամենում է:

Թագաւորի կասկածն ուղիղ էր: Յլօրիգէլը որսորդութեան ժամանակ մէկ օր պատահմամբ կանգ է առնում հովւի տան մօտ, ուր նրան ներս են հրաւիրում, հիւրասիրում, առանց ճանաչելու նրա ով լինելը: Այդտեղ հանդիպում է նա Պէրիտային և տեսնելուն պէս՝ մեխւում է տեղն ու տեղը, ինչպէս մագնիսացած: Նա հիւսնում, զմայլում և յափշտակում է իբրև մի աննման և չնաշխարհիկ պատկերի առջև: Նա այնպէս է զգում, որ կարծես Պէրիտան մի օտար

աղջիկ չըլինէր, այլ իր արիւնից ու մարմնից, որից բաժանւել կարող չէ այլ ևս: Եւ որքան աւելի է մօտենում, ասում, խօսում, տեսնում գործերը և ծանօթանում, այնքան աւելի է զարմանում, թէ ինչպէս առանց այդ բոլոր արժանիքը տեսնելու էլ՝ իր սիրտը վկայեց, որ մի չնաշխարհիկ էակ է գտել: Ահա սրա մօտ էր շարունակ գնում գալիս Յլօրիգէլը, և յայտնել էր միայն Պէրիտային ծածուկ, թէ ով է ինքը և խօսք էր տւել, որ ամենամօտիկ տօնին, այն է՝ ոչխար խուզելու ժամանակին՝ հանդիսաւոր կերպով կրկնաբար նրա ձեռքը և փոխարէնը կրտայ նրան իր սիրտը և բոլոր անձը, առանց յայտնելու իր ով լինելը: Այդ բանը պիտի ծածուկ փնար երկուսի մէջ, մինչև յայտնւելու ժամանակը հասնէր:

Պէրիտան ասում է, որ մեծ է տարբերութիւնը իրանց ծագման, որքան որ սրաները մօտիկ է, այնքան այդ կողմանէ հեռու են կանգնած իրարից. սրա համար էլ դժւար թէ համաձայնի թագաւորը, երբ այդ իմանայ:

— Անշուշտ, նա որ իմանայ, պիտի բարկանայ, — պատասխանում է Յլօրիգէլը. — բայց բարկանալով ի՞նչ պիտի անի. շնտ, շնտ, պիտի զըրկի ժառանգութիւնից: Բայց ինձ համար դու ամեն ժառանգութիւնից բարձր ես, որովհետև դու իմ կեանքն ես, իմ հոգին ես. առանց քեզ ես չեմ կարող ապրել ոչ մի օր: Իսկ դ՞ու ինչպէս: Դու կուզես միթէ, որ ես քեզ թողնեմ, միթէ ինձանից զրկւելը քեզ համար զգալի չի՞ լինիլ:

— Ես չեմ զգալ ոչինչ, որովհետև չեմ ապրիլ առանց քեզ: Բայց ես լաւ կը համարեմ ինքս չապրել, քան թէ քեզ անբախտացնել, քեզ զըրկել արքայական գահից...

— Էլ չըխօսենք այդ մասին, մենք կը վարենք այնպէս, ինչպէս մեր սիրտը մեզ կը թելադրէ, մնացածը կը ձգենք աստուածների կամքին. թող նրանք տնօրինեն և շրջեն մեր բախտի ահիւրը, ինչպէս իրենք են կամենում:

Ոչխար խուզելու ժամանակ մեծ տօն էր կատարուում հովիւների մէջ. ամեն կողմերից հիւրեր էին գալիս, դիմակահանդէս էր լինում և ամեն տեսակ խաղեր ու պարեր: Օգուտ քաղելով այս հանգամանքից՝ Պօլիքսէնն ու Քամիլը, կեղծ մօրուք են դնում, և գիւղացու վերարկուններում փաթաթուում և իբրև ճանապարհներ, գալիս, խառնուում են միւս հիւրերի հետ, որոնք հաւաքւել էին արդէն ծերունի հովւի տանը:

Հովիւը սիրով ընդունեց նորեկ անձանքի հիւրերին և խնդրեց, որ մասնակից լինին սոնախմբութեանը: Պէրիտային էլ ասեց, որ եկողներին հիւրասիրէ իբրև տանտիրուհի, ուրախ ու զւարթ լինի և ուրիշներին էլ ուրախացնէ: Պէրիտան, որ դարձարւել էր ծաղիկների թագուհու Ֆլօրայի հագուստով, հրահանգ ստանալու պէտք չունէր. նա ինքը լաւ գիտէր իր կատարելիք դերը: Ոչ մի հիւրի անուշադիր չէր թողնել. ամեն մէկին մի անուշ խօսք կատէր, սիրալիր կատակներ կանէր, կը սրախօսէր: Նա առանձին

ուշադրութիւն էր դարձնում Պօլիքսէնի և Քամիլի վրայ, նրանց հագուստին չէր նայում, այլ թափանցում էր նրանց աչքերի մէջ մի այնպիսի սուր հայեացքով, որ համուում էր մինչև ներանց հոգու խորքը, և այդ ժամանակ նրանք իրանց այնպէս էին զգում, ինչպէս գողութեան մէջ բռնաւճներ: «Այս աղջիկը մեզ յանդիմանում է կարծես, թէ ինչո՞ւ ենք մենք ծպտած», ասում էր Պօլիքսէնը Քամիլին: «Ես էլ միևնոյնն եմ զգում», պատասխանում է Քամիլը, — և դեռ մի քիչ էլ աւելի: Սա ինքը այն չէ, ինչ որ կայ, այլ ուրիշ բան է, բայց այս մասին յետոյ»...

Թագաւորը նկատում էր, որ Պէրիտան իր բնակավայրից շատ բարձր է կանգնած, իսկ Քամիլը թէև ոչինչ չէր ասում, բայց նրա սիրտը աւելի շատ բան էր զգում և ասում: Նա պատրաստ էր պնդել, որ Պէրիտան Լէօնտի կորած աղջիկն է, բայց ինչպէս ասէր, ինչո՞վ ապացուցանէր, քանի որ այս բոսպետիս նա համարուում է հովւի հարազատ աղջիկը: Սրա համար էլ նա չէր յայտնում սրտինը, սպասում էր, որ ժամանակն ինքը պարզաբանէր այս մութ խնդիրը: Աղջիկը պատկերով նմանութիւն էր տալիս Լէօնտին, բայց շարժմունքը, վարմունքը, խօսք ու զրոյցը, ձայնը, աչք-ունքը և բերանը մօրն էր քաշել և այնքան նման էր, ինչպէս մի խնձոր կէս արած:

Ֆլօրիզելը ոչինչ չէր երևակայում. նրան պէտք չէր, թէ ինչ ծագումն կարող էր ունենալ Պէրիտան: Նա զգում էր, որ Պէրիտան և ինքը մի ամբողջութիւն են կազմում, ինչպէս ոսկրը

ասկրից և մարմինը՝ մարմնից, և որ նրանց բա-
ժանել անկարելի է: Նա հովւի հագուստով պա-
քում էր Պէրիտայի հետ, ձեռքը համբուրում պաշ-
տելու չափ և անւանում էր իր ամենասիրելի
հովուհին: Մի քանի պտոյտից յետոյ բոլոր հիւ-
րերի առջև, հանդիսաւոր կերպով Ֆլորիզէլը մօ-
տեցաւ ծերունագարդ հովւին և խնդրեց Պէրի-
տայի ձեռքը:

Ծերունին վաղուց արդէն նկատել էր եր-
կուսի էլ լուրջ և անկեղծ սէրը, ուրախութեամբ
տուաւ իր համաձայնութիւնը, յետոյ դառնալով
ձանպորդ հիւրերին, խնդրեց, որ վկայ լինին իր
տուած համաձայնութեանը, խոստացաւ նաև աղ-
ջրկանը տալ մեծ օժիտ:

—Նրան պէտք չէ ոչ մի օժիտ,—պատաս-
խանեց Ֆլորիզէլը:—Նրա հոգեկան յատկութիւն-
ները անհատնում գանձ են ինձ համար: Իսկ
ինչ վերաբերում է հարստութեան, դրանով ես
այստեղ բոլոր եղողներիդ կարող եմ զարմացնել
հէնց հիմա, իսկ ժամանակով այժմեան ունեցածս
կարող է հարկւրապատկւել նոր ժառանգութեամբ:

—Երևի, երբ, որ հայրըդ կը վախճանւի—
վրայ բերաւ Պօլիքսէնը:

—Այո, հէնց դրա պէս մի բան: Հայրիկ,
դու միայն օրհնիր մեզ, իսկ մեր պատուական
հիւրերը թող վկայ լինին:

Ծերունին մօտեցաւ, որ նշանածների ձեռ-
քերը միացնէ և օրհնէ, Պօլիքսէնն ընդհատեց նը-
բան և դառնալով Ֆլորիզէլին՝ ասեց.

—Սպասիր, սիրուն պատանի, մի շտապիր:

Գու ուզում ես, որ մենք վկայ լինինք քո բը-
նած գործին, առանց մեզ ճանաչելու, բայց մենք
լինչպէս կարող ենք վկայել, քանի որ չենք ճա-
նաչում ձեզ և չըգիտենք դուք ով էք, ի՞նչ էք,
ձրաեղացի էք: Այս խեղճ ծերունին նոյնպէս չը-
գիտէ: Ասացէք խնդրեմ, դուք հայր ունի՞ք:

—Յետո՞յ, դրանով ի՞նչ էք ուզում ասել:

—Ուզում եմ ասել՝ հայրըդ գիտէ՞, թէ դու
ինչ բանի վրայ ես:

—Ոչ, չըգիտէ, և չըպիտի գիտենայ: Սա
իմ անձնական գործն է. ուրիշն իմ գործումը
խառնելու իրաւունք չունի:

—Թող այդպէս լինի. բայց ծնողը որդու
բախտաւորութիւնը տեսնելուց ինչո՞ւ պիտի զըրկ-
ւի, ընդհակառակը՝ որդու հարսանիքում հայրը
պէտք է լինի առաջին հիւրը: Բայց գուցէ քո
հայրը ծէր է, անկարող է և ուշքը կորցրած:

—Ոչ, պատուական հիւր, իմ հայրն առողջ է
և առոյգ, որ նրա տարիքում շատ քչերին է պա-
տահում լինել, բայց ձեզանից ի՞նչ թաքցնեմ,
ես գաղտնի պատճառներ ունիմ այս բանը ծած-
կելու իմ հօրից:

—Ասա մեզ այդ պատճառները:

—Կարելի չէ ասել:

—Խնդրում եմ:

—Ի՞նչ կայ, որդիս,—մէջ ընկաւ հովիւը,—
յայտնելի, ասա քո ով լինելդ: Մի վախենար,
քո ընտրութիւնը կարող չէ անպատուութիւն բե-
րել քո ծնողին:

—Գիտես ի՞նչ, հայրիկ,—պատասխանեց Ֆլ-

լօրիզէլը, — դուք որ իմանաք թէ ով է իմ հայրը, էլ ձեր աղջիկն ինձ չէք տալ. իսկ ես չեմ կարող զրկւել Պէրիտայից:

— Իսկ քո հայրը՞, նա ինչպէս կը վերաբերւի, եթէ իմանայ, — հարցրեց Պօլիքսէնը:

— Աւելի վատ, նա կը զրկէ ինձ ոչ միայն Պէրիտայից, այլ և ամեն բանից, ինչ ունիմ չունիմ: Ահա թէ ինչու չեմ ասում, թէ ով է իմ հայրը:

— Իսկ եթէ հայրըդ ինքը երևայ յանկա՞րծ...

Այս ասելով՝ Պօլիքսէնը մի կողմ նետեց իր դնովի մօրուքը, հանեց վերարկուն և երևալով իր արքայական փառահեղ զարդերով, ասեց բարկութեամբ.

— Անմիտ, յանդուգն տղայ... դու արքայական Գայիտոնը հովւի մըհակի հետ ես փոխանակում... Ես գնում եմ... ետեիցս կը դաս անպատճառ... էլ ոչ մի անգամ այստեղ ոտք չես դնիլ...

Այս ասելուց յետոյ մի բարկացկոտ հայեացք ձգեց ամենքի վրայ և դուրս գնաց:

Բայց որդին չըհետեց հօրը, այլ մնաց հովւի տանը: Քամիը նոյնպէս չըգնաց թագաւորի հետ, այլ մնաց Փլօրիզէլի մօտ:

8

— Հիմա որ իմացաք, թէ ես ով եմ, — ասեց Փլօրիզէլը ներկայ եղողներին, — չըկարծէք, որ ես այլ ևս չեմ կարող իմ խօսքի տէրը լինել: Այս բոլորը ես նախատեսել եմ Պէրիտայի հետ, որից չեմ ծածկել իմ ով լինելը: Հայրս կարող

է ինձ ժառանգութիւնից զրկել, իսկ իմ Պէրիտայից — երբէք: Մենք կարող ենք ապրել առանց թագաւոր լինելու էլ, ինչպէս ապրում էք դուք ամենքդ:

Քամիը, որ մինչև այժմ չէր ասել ոչ մի խօսք, և գիտութեամբ էր մնացել, որ Փլօրիզէլին ազատէ վերահաս դժւարութիւններից, այժմ սկսեց խօսել և ասեց.

— Սիրելի իշխան, դուք ծանօթ էք ձեր հօր խստութեանը. նա թոյլ չի տալ, որ դուք ձեր ուղածն անէք, այլ կը ստիպի, որ այն անէք, ինչ որ ինքն է ուզում:

Այս ասելով՝ Քամիը նոյնպէս հանեց իր կեղծ մօրուքն ու վերարկուն, որ Փլօրիզէլը տեսնի, թէ ով է նրա հետ խօսողը:

— Այո, կը ստիպի, ես այդ գիտեմ. դրա համար էլ ես չեմ մնալ նրա իշխանութեան տակ, նրա երկրումը: Ձեզ կը ինչոքեմ, սիրելի Քամի, որ դուք, իբրև հօրս բարեկամներից ամենամօտիկը և ազգեցիկը. չափաւորէք նրա տխրութիւնը, երբ կը տեսնի, որ զրկւել է իր միակ սիրելի գաւակից: Նա ինձ չի տեսնիլ այլ ևս: Ես ինքս կը հարթեմ ինձ համար ապրելու ճանապարհս: Այս բոլորն ասացէք իրեն և աւելացրէք, որ ես անցսյ ծովի միւս կողմը և ինձ հետ տարայ նրան էլ, ում հետ չէի կարող ապրել իր տէրութեան մէջ: Մեր նաւն արդէն պատրաստ է, թէև դրան պատրաստել էինք միայն մեր տօնական զրօսանքը կատարելու համար: Քնանք ուրեմն, սիրելիդ իմ Պէրիտա, մեզ հետ կը տանենք

և հօրըդ ու եղբօրըդ, որ հայրս վրէժ չառնէ նրանցից:

—Շատ լաւ էք անում, որ գնում էք,—ասեց Քամիլը,—ուրիշ լաւագոյն ելք չըկայ, բայց սր էք վճռել զնալ:

—Ոչինչ չենք որոշել. կերթանք, ուր որ աստեածները կառաջնորդեն մեզ...

—Որ այդպէս է, լսեցէք ինձ: Դուք կերթաք Սիցիլիա. ուղղակի Լէօնտ թագաւորի մօտ, նրա ապարանքը: Դուք, իշխան, Պէրիտայի հետ որպէս ամուսիններ, կընե՞րկայանաք թագաւորին, իբր ձեր հօր կողմից գիտութեամբ ուղարկած, որ իր հին բարեկամին մխիթարական ողջօյններ հաղորդէք: Իսկ ես կըմնամ այստեղ և կաշխատեմ հօրըդ հաշտեցնել ձեզ հետ: Եւ որպէս զի Սիցիլիայում ապրէք արքայապայել պատուով, դժբա համար դուք կարող էք օգուել իմ այնտեղ ունեցած կարողութիւնիցս, որի համար հէնց հիմա կըտամ հարկաւոր թղթերը:

Մեծ ուրախութեամբ և շնորհակալութեամբ ընդունեց Քամիլի առաջարկութիւնը, և մի ժամ չանցած՝ արդէն պատրաստ էին ուղևորուելու: Նաև հասան ծպտած, որ չըճանաչէին, իսկ այնտեղ նաւապետն ընդունեց նրանց Քամիլի անձամբ աւանդ հրամանով, որ նրանց հասցնէ Սիցիլիա:

Ծերունին չըմոռացաւ իր հետ վերցնել այն բոլոր իրերը, որոնցով պիտի ապացուցէր, որ Պէրիտան հովւի հարազատ աղջիկը չէր: Այս բաները նա ուղեց ցոյց տալ և Քամիլին, բայց նա ասեց, թէ՛ ինչ ունիս. չունիս՝ հետդ տար, մինք յետոյ կըտեսնենք:

Լէօնտ թագաւորի կրած վիշտն ու կսկիծը տաննրվեց տարիների ընթացքում շատ քիչ թեթեւացան: Նրա զղջալը, նրա կրած վիշտն ու տանջանքն այնքան մեծ էր, սրով կարող էր ջնջել նոյնքան մեծ յանցանքը, բայց նա դեռ շարունակում էր խղճահարւիլ, որովհետև շարունակ յիշում էր, թէ որպիսի ամուսնուց զրկեց ինքն իրան. յիշում էր մէկ-մէկ նրա բարեմասնութիւնները և երկու ձեռքով գլխին խփում: Յիշում էր, թէ ինչպէս զրկեց թագաժառանգից, թէ ինչպէս զրկեց նրան մօր զրգւանքից, թէ ինչպէս կորցրեց և միւսին... Եւ ամեն յիշելիս նրա մազերը փշաքաղում էին և սոսկում ու սարսափում էր ամբողջ մարմնով:

Նրան համակրող պալատականներից շատերը խորհուրդ էին տալիս որ կրկին ամուսնանայ: Դրանով, ասում էին, ձեր վիշտը հեշտութեամբ կըփարատւի և դուք կունենաք նաև գահաժառանգ: Բայց բոլորի յորդորը և տւած խորհուրդը գուր էին անցնում:

Տիկին Պաուլինան հակառակ էր թագաւորի կրկին ամուսնանալուն: Սա մէկ անգամ միւս պալատականների ներկայութեամբ ազնիւ խօսք սուս թագաւորից, որ նա չի ամուսնանալ, մինչև չըգտնէ այնպիսի մի կին, որ բոլորովին նման լինի հանգուցեալ թագուհուն: Հանաքով էլ ասեց, որ ինքը կաշխատէ գտնել իր ասածի պէս մի հարսնացու: «Իմ գտածը, ասում էր, տարիքով

մի քիչ մեծ կըլինի թագուհուց, բայց մնացած բաներով բոլորովին նման կըլինի նրան»...

Այսպիսի խօսակցութիւնով էր պարապած թագաւորը իւրայիններէ հետ, երբ մի պալատական ներս եկաւ և ասեց.

—Ո՞րչ լինի թագաւորը: Մի երիտասարդ մարդ է եկել, հետը մի չըլլած գեղեցկութեան իշխանուհի: Ստում է, որ ինքը Պօլիքսէնի որդին է, Բոհեմիայի գահաժառանգը, և թոյլտուութիւն է խնդրում ներկայանալ ձեր մեծութեանը:

Թագաւորը մնաց զարմացած այս անակնկալ այցելութիւնից և մինչև թոյլտուութեան հրաման կըտար, Ֆլօրիզէլը ներս մտաւ Պէրիտայի հետ և իսկոյն սկսեց.

—Տէր թագաւոր, հայրս յանձնարարել է ինձ, որ գամ Սիցիլիա և անձամբ հաղորդեմ ձեր մեծութեանը այն բոլոր բարի խօսքերը, ինչ որ կարող էր ասել նա իր սիրելի եղբօրը: Նա ինքը կուզէնար դալ, եթէ մի քանի հանգամանքներ արգելք չըլինէին և եթէ ճանապարհը մինչև այստեղ շատ երկար չըլինէր:

—Օ, իմ բարի եղբայր,—բացականչեց Լէօնոր.—ինչքան մեծահոգի ես դու, իսկ ես ամօթապարտ քո առջև: Եւ այս քնքուշ էակներին ինչպէս ես ենթարկել նաւորդութեան բոլոր վրտանդներին:

—Սա ինձ հետ սկսեց նաւորդել Լիբիայից:

—Գիտեմ, այնտեղի իշխողն է նշանաւոր Սմալիւսը:

—Այո, նա աղի արցունք թափեց աղջկա-

նից բաժանուելիս. բայց ես չէի կարող չըկատարել հօրս հրամանը. իսկոյն ճանապարհ ընկայ կնոջս հետ և եկայ ձեզ այցելութեան:

—Ձեր հայրը շատ պատուական և ազնիւ մարդ է: Ես մեղաւոր եմ նրա առջև: Այդ յանցանքի համար ինձ պատժեցին աստուածները շատ սաստիկ: Նրանք թողեցին ինձ անզուակ, իսկ հօրչղ օրհնեցին իր արժանաւորութեան համար, պարգևելով նրան ձեզ նման որդի՝ բոլորովին արժանի նրա պատուական յակութիւններին: Եւ ինչքան նման էք դուք նրան... Որդիս ձեզ հասակակից կըլինէր. նա ձեզանից միայն մէկ ամսով էր առաջ ծնւել: Իսկ այդ ազնիւ օրիորդը... Օ... ինչքան նման է...

Արցունքն արգելեց թագաւորին, որ խօսքը լրիւ ասէր: Հէնց այս ժամանակ ներս եկաւ մի այլ պալատական մի նոր համբաւով:

—Ձերրդ Մեծութիւն, եկել է Բօհեմիայի թագաւորը...

—Ի՞նչ ես ասում, մի՞թէ... Ընդհատեց նրան թագաւորը սաստիկ ուրախութիւնից: Զարմանալի բան է. աստուածները իրանց թէ պատիժը և թէ ողորմութիւնը յորդ անձրևի պէս են թափում մեզ վրայ... Ով գիտէ յետոյ էլ կըզաս ինչ կասես...

—Ես ոչինչ չեմ ասիլ, ձերրդ մեծութիւն, Բոհեմիայի թագաւորն ասեց ինձ, որ գամ իր ողջոյնը մատուցանեմ ձեզ և խնդրեմ իր կողմից, որ անյապաղ բանտարկել տաք իր գահաժառանգին...

—Օ... ես չեմ շտապիլ այդ բանն անել տալ, մինչև լաւ չըստուգեմ, թէ ի՞նչ յանցանքի համար...

—Նա ասում է, որ թագաժառանգը մոռանալով իր պարտականութիւնը դէպի գահը և ծնողը՝ փախել է մի ինչ որ շինական հովուհուհեա...

—Այդ մենք յետոյ կիմանանք, թէ շինական է արդեօք այս չնաշխարհիկ օրիորդի հայրը:

—Իրա հայրը և եղբայրը նոյնպէս եկել են և այստեղ են արդէն: Թագաւորի հետ եկել է և Քամիլը...

—Ի՞նչպէս, Քամիլին էլ է հետը, բացականչեց թագաւորը՝ սաստիկ ուրախացած: Ո՞վ ասուածներ, ձեր ողորմութիւնը մի թափէք զլիսիս կարկուտի նման. թողէք դա մաղւի վրաս մանրահատ անձրևի պէս...

—Ասացէք ինձ, իշխան, դուք պսակւել էք արդէն:

—Ոչ, տէր իմ, երևի չենք էլ պսակւիլ, եթէ...

—Ի՞նչ մարդու դուտար է սա, թագաւորի:

—Եթէ ամուսնանանք, կըդառնայ թագաւորի դուտար. միթէ իմ ամուսինս իմ հօր համար դուտար չէ:

—Այո, բայց դուք էլ դառնում էք ձեր ամուսնու հօր որդին... Ոչ, այդ տեսակ փաստերով չենք կարող հօրըդ համոզել... համոզող փաստեր ունի՞ք, այն ասացէք...

—Եթէ դուք մեզ պաշտպանէք, մենք ոչ մի փաստի կարօտ չենք լինիլ: Հայրս ձեր ոչ մի

խնդիրը չի մերժիլ. այդ ես հաստատ գիտեմ: Իսկ դուք էլ յիշեցէք ձեր այն օրը, երբ իմ հասակումն էիք. չէ՞ որ դուք էլ էք սիրելի: Ուրեմն եղէք մեր պաշտպանը...

Թագաւորը դարձեալ մի խոր հայեացք գցեց Պէրիտայի վրայ և սկսեց քթի տակ մըմնջալ. — «Նոյն աչքերն են, նոյն բերանը... նոյն վեհութիւնը հասակի և շարժմունքի... սա չի կարող մի տեսակ բնութեան խաղ լինել»... Նայեց, նայեց, յետոյ երեսը ձեռքով ծածկեց և ասեց.

— Գնանք, ես յանձս եմ առնում ձեր փաստաբանը լինել... Գնանք հօրըդ մօտ:

10

Քամիլը հաստատ մնաց իր խօսքին: Նա պաշտպանեց Ֆլօրիդէլին ու Պէրիտային և նրանց չըզցեց Պօլիքսէնի ձեռքը: Նա մտածում էր դըրանց մճըճած խնդիրն այնպէս լուծել, որից ամենքն էլ բաւական մնան և մեծ հաճոյք զգան: Նա առաջուց զգացել էր արդէն և յետոյ էլ ըստուգել գործի հանգամանքը: Հիմա, երբ երկօքին հայրերը մէկ տեղ էին եկել, նա կանչել տւաւ հովիւներին, որ նրանք պատմեն բոլոր եղելութիւնը Պէրիտայի ծագման մասին:

Ծերունի հովիւը թագաւորի առջև բաց աբաւ հետը բերած ծրարը և այնտեղից հանեց թագուհու արքայական պատմուճանը, գոհարազարդ թանգազին մանեակը, Անտիգոնի նամակները: Այս բոլորը բաւական ապացոյց էին և համոզեցին Լէօնտին, որ Պէրիտան իր հարազատ

աղջիկն է, թէև նրա սիրտը վկայել էր նախ քան այդ սպացոյցների տեսները:

Հովիւները պատմեցին, թէ ինչպէս տեսան նաւի խորտակումը իրանց աչքով, Անտիգոնի արջակուր լինելը: Այստեղ հովւի որդին ցոյց տաւ Անտիգոնի թաշկինակը և մատանին, որ իսկոյն ճանաչեց տիկին Պաուլինան:

Էլ ո՞վ կամ ի՞նչ լեզու կարող է պատմել թագաւորների հոգեկան վիճակը այդ տեսարանից յետոյ: Նրանք մնացել էին լուռ, անշարժ, սառած, փէտացած, երկար ժամանակ ուշքի չէին գալիս, խօսք չէին գտնում միմեանց ասելու, նայում էին իրար երեսի ապուշ կրթած, որպէս թէ հէնց այս րոպէիս լսած լինէին, որ մի նոր աշխարհ է ստեղծագործւել կամ եղածը կործանւել: Վերջապէս ուշքի եկան, գրկախառնւեցին և երկար ժամանակ մնացին իրար սղմած և յորդ արտասուք թափելիս:

Վերջը ուրախութեան և տխրութեան արցունքը թափւում էր ամենի աչքերից: Լէօնտը գոչում էր աղի ողորմ ձայնով.— Օ... Հերմիօնա, Պէրիտան քո աղջիկն է... մէկ վեր կաց տես և ուրախացիր մեզ հետ...

Թագաւորի յուզմունքը մի քիչ խաղաղելուց յետոյ միայն կարողացաւ փոխ առ փոխ գգւել իր աղջկանը և փեսացւին, որին սիրել էր արդէն առաջին հայեացքից: Ներողութիւն խընդրեց Պօլիքսէնից, շնորհակալութիւն յայտնեց ծերունի հովւին և նրա որդուն, որոնց հէնց նոյն օրը տոհմական ազնւականների կարգը ձգել տը-

ւաւ և պարգևատրեց հարուստ ընծաներով և պալատականների ճոխ հագուստով...

Տիկին Պաուլինայի ուրախութիւնն ու տըխրութիւնը իրար էին խառնւել. նա թէ խնդում և թէ լաց էր լինում: Տխուր էր ամուսնու դժբախտ վախճանի համար, և ուրախ էր, որ կատարեց վերջապէս պատգամախօսի գուշակութիւնը, թէ՛ «կորածը կը գտնուի»: Նա գիրկն առաւ Պէրիտային և այնպէս պինդ պահեց, ինչպէս թուխսն իր ձագին, երբ գիշատիչ թռչունից պաշտպանում է նրան:

Պէրիտան, որ մինչև այսօր ոչինչ չըզիտէր իր իսկական անցեալի մասին, իսկ հիմա, որ իմացաւ, թագուհի մայր է ունեցել և նա էլ այնպիսի դժբախտ վախճան է ունեցել, զրկեց հօրը և արտասուքով խնդրեց, որ ցոյց տայ մօրը, նրա պատկերը կամ գերեզմանը, որ իր արտասուքովը ողողէ նրան...

Այստեղ միջանատեց նրան տիկին Պաուլինան և ասեց.

— Թող չըխուովի ձեր սիրտը... Ես ցոյց կը տամ նրան ձեզ թէ մեռած և թէ կենդանի, որովհետև ես շինել եմ տւել նրա արձանը այնքան հրաշալի, որ ոչ մէկդ կարող չէք ասել, որ նա մի անշունչ մարմարիոն է և ոչ թէ միս ու արիւն ունեցող մի կենդանի անձնաւորութիւն: Արձանագործն է երևելի արւեստագէտ իտալացի Ջուլիօ Ռօմանոն, որ շատ տարի է աշխատել դրա վրայ և երէկ է միայն վերջին ներկը քրտել ու զնացել: Գնանք բոլորդ էլ ինձ մօտ և

ինքներդ տեսէք, թէ ինչ հրաշք է ստեղծագործել արևեստագէտը:

Եւ զնացին ամենքը...

11

Պատւիրնան երկու տուն ունէր, մէկը քաղաքի կենտրոնումը և միւսը՝ քաղաքի ծայրին: Արձանը շինել էր տել վերջին տանը, ուր ոչ մի հիւր չէր ընդունում: Միայն ինքը ամեն Աստծու օր՝ երկու անգամ այցելում էր անխափան թէ ամառ և թէ ձմեռ: Շատերը հարցնում էին, թէ ինչ ունի արդեօք այնտեղ, որ ստէպ ստէպ յաճախում է: Հիմա իմացան որ այնտեղ բան է եղել շինել ապրիս սկսած թագուհու մահւան օրից մինչև այսօր:

Այսօր անա բոլոր հիւրերին տարաւ նոյն տունը, ուր թագուհու արձանը ցոյց տալուց առաջ ծանօթացրեց մեծ արևեստագէտի միւս հրաշալի ստեղծագործութիւնների հետ: Իսկ արձանը գտնուում էր մի առանձին մեծ դահլիճում, որի պատուհաները վարագուրւած էին, բոլոր սենեակը լուսաւորւած էր վերևից մի աղօտ ճրարագով այնպէս, որ պայծառ լոյսի փոխարէն իշխում էր մի խորհրդաւոր կիսամթութիւն:

Պատերի մէկի մէջ շինւած էր մի որմախորշ, ուր դրւած էր արձանը և երեսին քաշած ծանր վարագոյր: Տիկինը հիւրերին մօտեցրեց այդ վարագուրին և այդտեղ ասեց թագաւորին:

—Տէր իմ թագաւոր, ձեր ամուսինը շատ գեղեցիկ էր և կենսալից. այսպէս է նա և այստեղ

իր արձանի մէջ. պատրաստեցէք տեսնել արևեստի հրաշքը, գեղեցիկ արևեստի, որ կարողանում է անշունչ քարին հոգի տալ, կեանք դնել նրա մէջ:

Այս ասելով՝ Պատւիրնան արագութեամբ յետքաշեց վարագոյրը, և դիտողները՝ արձանի տեսքից մնացին անշարժ, քարացած: Պատուհանի վրայ լուռ, անշարժ կանգնած է անա թագուհի Հերմիօնան ինչպէս կենդանի:


Պատւիրնան տեսնելով՝ որ իր գուշակած տղաւորութիւնը գործեց արձանը ամենքի վրայ, ասեց.

—Լուէլ էք. զարմացել էք. ապշել էք. ասացէք խնդրեմ, Տէր թագաւոր, ինչպէս էք գտնում, նման է, թէ՞ ոչ:

—Նա, նա ինքն է. քարի մէջ կենդանացած: Օ՛, անիծիր ինձ, անգին քար: Բայց ոչ, աւելի լաւ կանես, որ չանիծես, այդ կողմից էլ նրան նմանիր. նա չէր անիծում. նա հեզ էր և բարի, ինչպէս մի անմեղ երեխայ... Բայց, Պատւիրնա, թագուհին ոչ մի կնճիւ չունէր, իսկ սա աւելի հասակով է թւում նրանից:

—Ի՞նչ փաստ ունի, տէր արքայ, — պատասխանեց Պատւիրնան, — այդ տարբերութիւնն աւելի էլ պիտի զարմացնէ ձեզ, թէ ինչքան շնորհալի է եղել արևեստագէտը, որ տասնըվեց տարի աւելացնելով՝ արձանը շինել է այնպէս, ինչպէս թագուհին կըլինէր այսօր, եթէ կենդանի լինէր:

—Այո, այո, այսպէս կըլինէր և ինչքան բախտաւոր և ուրախ կըլինէի ես... Ով անդրի,



որ հաւասարը չունիս, դու նորոգեցիր յիշողութեանս մէջ իմ բոլոր շարագործութիւններս...

—Թոյլ տւէք ինձ, — սկսեց Պէրիասն, — որ ծունկ չոքեմ մօրբս առջև... մի համարէք նախապաշարմունք, եթէ խնդրեմ, որ նա օրհնէ ինձ... Ո՛վ թագուհի, ո՛վ մայր իմ, որ վախճանւել ես իսկոյն ինձ ծնելուց յետոյ, թոյլ տուր որ համբուրեմ քո սուրբ ձեռքը...

—Զգոյշ, զգոյշ, — գոչեց Պատւինան, քաշելով Պէրիասային, — զիպչել չի կարելի, ներկերը դեռ չեն չորացել... Եւ սւգեց վարագոյրը ծածկել:

—Սպասիր, Պատւինա, — ասեց թագաւորը, — ինչպէս կրցանկանայի ես մեռնել աչքս ձգած այս արձանին: Նայիր, նա կածես շունչ է քաշում, կարծես արիւն է հոսում նրա թափանցիկ երակների մէջ...

—Այո, այո, — բացականչեց Պօլիքսէնը, — նրա շրթունքների վրայ կարմրութիւն է խաղում և կարծես տեսնում է մեզ ամեն մէկիս կենդանի հայեացքով...

—Օ... եթէ ես հաւատամ, որ նա կենդանի է... Տիկին Պատւինա, խնդրում եմ մի ծածկիր վարագոյրը, մենք դեռ չենք կշտացել նայելուց, — ասում է Լէօնոր...

—Դուք շատ էք յուզւած, տէր թագաւոր, վախենում եմ, մի գուցէ ձեր ամուսնու տեսքը վերանորոգէ անցած, մոռացած դառը կսկիծները:

—Թոյլ այդպէս լինի, այդ դառնութիւնը այժմ ինձ համար, այս պատկերի առջև՝ հաճոյք է... Ոչ, ինչ կուզէք ասացէք, շնչառութիւնը շար-

ժուժ է նրա շրթունքները: Ի՞նչ անդրիագործ կարող էր տալ նրան այդ կեանքը: Մի ծիծաղէք, ես ուզում եմ համբուրել թագուհուն: Եւ թագաւորը ձգւեց դէպի արձանը, բայց Պատուինան արգելեց նրան, ասելով.

— Կարմրադեղը դեռ չի շորացել, նրանից կարելի է թունաւորել... Ոչ, ոչ, ժամանակ է ծածկելու վարագոյրը:

— Ո՛չ, ոչ, ես պատրաստ եմ կանգնել անշարժ, միայն մի ծածկէք:

— Ես նոյնպէս հանդիստ կը կանգնեմ, — ասեց Պէրիտան, — ես չեմ կարող աչքս հեռացնել նրանից, նա շարունակ ինձ է նայում...

— Եթէ այդպէս է, — ասեց Պատուինան, — ընտրեցէք երկուսից մէկը՝ կամ այս ըստէիս թողէք այս դահլիճը և կամ պատրաստեցէք տեսնելու աւելի մեծ հրաշք: Գուք տեսաք միայն արձանը, բայց ես կարող եմ ասել այս արձանին, որ իջնի պատուանդանից և դայ ձեր ձեռքը բռնէ: Գուցէ դուք կարծէք, որ ես կախարդութիւն եմ անում, բայց այդ սուտ կըլինի... Ուրեմն հաւատացէք իմ խօսքին և հանդիստ կացէք:

— Այս միջոցին նշան է տալիս տիկինը, և նւագածուները, որ առաջուց պատրաստած է ունեցել վարագուրի ետերը, նւագում են մի խաղաղ և խուլ, բայց շատ սրտաշարժ եղանակ: Իսկ ինքը տիկինը դառնալով արձանին՝ առաջարկում է նրան մի առանձին արտասանութեամբ ու հանդիսաւորութեամբ.

— Զարթիր, հասնւ ժամանակը... Թող քո քարացած կեղևը... Մօտեցիր... Այստեղ եղողներին պատիր ակամայ զարմանքով...

Եւ արձանը նւագածութեան ամանակով, յամբ քայլերով իջնում է պատուանդանից:

— Մի վախենաք, — շարունակում է Պատուինան, — նա ոչ մէկիդ մի վնաս չի տալ... Նրա շարժումները նոյնքան անմեղ են, ինչքան և իմ կախարդութիւնը: Թագաւոր, մի շրջիր երեսըդ, մի խփիր աչքերըդ. աւէք նրան ձեր ձեռքը...

Բայց թագաւորին արդէն վաղուց էր գրկել թագուհին և ծածկել համբոյրներով...

— Այս ինչ զարմանալի դիպաւձով է ապրել թագուհին մինչև այսօր, — ասում է Պօլիքսէնը:

— Բաւական է, աէր թագաւոր, թող իշխանունին ծունկ չոքի մօր առջև և առնէ նրա օրհնութիւնը: Նայեցէք, աէր թագուհի, սա ձեր գտնւած դուստրն է, — ասում է Պատուինան:

— Ո՛վ ասուածներ, — սկսեց նւագ ձայնով թագուհին, — թափեցէք ձեր շնորհքը, ձեր օրհնութիւնն ու ողորմութիւնը իմ աղջկայ վրայ... Աստ ինձ, զաւակս, սրտեղ էիր ապրում. ինչպէս ազատեցիր մահից, ինչպէս յայտնեցիր այստեղ: Ես իմ կեանքը պահպանեցի միայն քեզ համար, հաւատալով պատգամախօսին, որ յոյս էր տալիս, թէ դու կենդանի ես և պիտի գլուխես մէկ օր: Այսպէս հաղորդեց ինձ Պատուինան, որի մօտ ես էլ ապրել եմ մինչև այսօր:

Բայց մեծանողի տիկինը ընդհատեց թագուհու խօսքը, ասելով. — Յետոյ, յետոյ, պատ-

մութիւնը յետոյ կանէք: Այժմս ուրախութիւններս մի խանգարէք հին հին յիշողութիւններով: Գնացէք, ով բախտաւորներ, գնացէք ձեր տները և վայելեցէք ձեր երջանկութիւնը: Իսկ ես այստեղ կըմնամ իբրև վշտալից այրի և ինչպէս վարուժանը կորցրած տատրակ՝ մեն մենակ թառած ճիւղի վրայ, կողբամ իմ կորած Անտիգոնիս համար...

—Այսօր ոչ ոք իրաւունք չունի ողբալու, Պաուլինա, —ասեց Լէօնար, —այսօր ուրախութեան օր է, մի չըլլած ու չըտեսնուած ուրախութեան: Դու չես կարող անբաժան մնալ այս ուրախութիւնից: Դու տւիր ինձ իմ կինս, որ մեռած կենդանի էր, իսկ ես կենդանի մեռած, դու կեանք տւիր մեզ երկուսիս էլ: Ես էլ քեզ մի ամուսին կըտամ, որ Անտիգոնիցդ պակաս ազնիւ չըլինի և դեռ նրանից էլ երիտասարդ լինի: Մօտեցիր, իմ ազնիւ, իմ պատւական Քամիլ և ձեռքդ տուր Պաուլինային, որի բարեմասնութիւնները քեզ լաւ յայտնի են... էլի շատ ասելիք կայ, բայց ես չեմ ուզում երկարացնել: Այժմ, Պաուլինա, մեզ առաջնորդիր դէպի տաճարը, թող այս ամենաբախտաւոր օրը երեկոյանայ Պէրիտայի և Քամիլի պրակադրութիւնով: Թող ամեն ինչ, որ անցաւ մեր գլխներով այս կարճ ժամանակում, գրի առնեն, որ յիշատակ և օրինակ մնայ մեր յետնորդներին...



3-832a

ԳԻՆՆ Է 20 ԿՕՊ.

1

ՀՀ Ազգային գրադարան



NL0328464

18.708

|| Apr.

-832a